

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍ

09.06.2020թ.

ք. Իջևան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 11 անդամները, մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մակարյանը: Հարգելի պատճառներով բացակա էին Հ. Ասատրյանը, Հ. Մխիթարյանը, Ա. Չիբուխյանը

ՕՐԱԿԱՐԳ

1. 2019-20 ուստարվա II կիսամյակի (մարտի 31-ից մինչև մայիսի 27 ժամանակահատվածի) ուսումնական գործընթացի կազմակերպման մասին: (Զեկուցող՝ Ա. Մարգարյան)
2. 2020 թ. ավարտական աշխատանքների պաշտպանության վերաբերյալ: (Զեկուցող՝ Ա. Մարգարյան)
3. 2020-21 ուստարվա ուսումնական պլանի քննարկում և հաստատում: (Զեկուցողներ՝ Մ. Ստեփանյան, Հ. Ասատրյան)
4. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա. Շ. Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի նախատեսված էր 2019-2020թ. ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին և երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփումները, սակայն, արտակարգ իրավիճակով պայմանավորված, քննարկվում է այս իրավիճակին համապատասխան հարցեր:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան հարցերի քննարկմանը:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Մարգարյանը: Ձեկուցողը նշեց, որ համավարակի հետևանքով մարտի 13-ից մինչև մարտի 30-ը մասնաճյուղում դադարացվել են դասընթացները: Նա նշեց, որ արտակարգ իրավիճակի պայմաններում, դասընթացների յուրահատկություններից ելնելով, դասախոսները կիրառում են հեռավար ուսուցման տարբեր միջոցներ, օր.՝ Viber-ի, WhatsApp-ի կամ Messenger-ի էլեկտրոնային հարթակները: Մարտի 31-ից սկսած՝ ԵՊՀ ԻՄ-ի և ֆակուլտետի աշխատակազմի կողմից ձեռնարկվեցին քայլեր, որպեսզի դասապրոցեսները լինեն կանոնակարգված՝ ըստ հաստատված դասցուցակի և ժամատախտակի՝ միասնական Zoom հարթակում՝ առաջնորդվելով 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի համար հաստատված դասացուցակների:

Սկզբնական շրջանում առաջին խնդիրը, ինչպես և սպասելի էր, տեխնիկական բնույթ էին կրում, որը որոշ ժամանակի ընթացքում հաղթահարվել է: Շատ կարճ ժամանակում կազմվել է Zoom հարթակի հնարավորություններն ընդրկող ուղեցույց, որի միջոցով իրագեկվել են ուսանողներն ու դասախոսները:

Առցանց ուսուցման գործընթացը հնարավորինս վերահսկվել է ուսումնամեթոդական վարչության, ֆակուլտետի դեկանի, ամբիոնների վարիչների, կրթական ծրագրերի պատասխանատուների համագործակցությամբ: Անմիջական կապ է ապահովվում կուրսերի ավագների հետ՝ ուսանողների կարծիքներն ու առաջարկները լսելու, թերացումները շտկելու, ուսումնական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Երկրորդ խնդիրը կապված էր դասախոսների՝ նման ձևաչափով դաս կազմակերպելու անպատրաստ լինելու հետ, քանի որ առաջին անգամ էր առցանց հարթակում դասապրոցես իրականացվում, սակայն համապատասխան ցուցումներից հետո այն նույնպես հաղթահարվել է:

Եվ երրորդ, ուսանողների «ոչ պատշաճ» վերաբերմունքն էր դասավանդման նման ձևաչափին (նրանց մասնակցությունը տատանվել է 40-60%)՝ դասերին չմասնակցելու համար հիմնավորումներ բերելով տարբեր պատճառաբանություններ:

Այնուհետև զեկուցողը նշեց, որ բաց թողած դասերը լրացնելու համար մայիսի 3-ից կազմվել է նոր դասացուցակ՝ հիմնականում երկուշաբթի օրերը, ավելացվել են լրացուցիչ դասեր, ինչը մեղմել, իսկ որոշ դեպքերում ամբողջությամբ վերացրել է թերացումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Մ. Ստեփանյանը առաջարկեց, որ կրկնվելու դեպքում պետք է պատրաստ լինել և ավելի հաջողված փորձ օգտագործել, որպեսզի դասապրոցեսը ավելի արդյունավետ լինի:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հնարավորության դեպքում ամբիոնների կողմից կազմակերպել դասախոսների հետ փոքրաթիվ ուսանողների հանդիպումներ՝ ուսանողների կատարած աշխատանքների գննության, առավելությունների և թերությունների մատնանշման, գնահատման և հետագա ցուցումներ և առաջադրանքներ տալու նպատակով:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Մարգարյանը: Նա նշեց, որ չորրորդ կուրսի բոլոր 15 ուսանողները մասնակել են ավարտական աշխատանքների պաշտպանությանը: Հայաստանում տիրող արտակարգ իրավիճակի պայմաններում պատշաճ ձևով և բարձր մակարդակով կազմակերպվել էին ավարտական աշխատանքների պաշտպանությունը: Բոլոր ուսանողները հնարավորություն ունեցան տեսահեռահաղորդակցման միջոցով ներկայացնել իրենց աշխատանքները: Ուսանողներն իրենց ավարտական

աշխատանքներում պահպանել էին նախատեսված չափորոշիչները: Ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակ առկա էին ղեկավարների և գրախոսների կարծիքները, որոնք պաշտպանության ընթացքում չընթերցվեցին, քանի որ հանձնաժողովի նախագահն ու անդամները պնդեցին, որ նախապես ծանոթացել են նրանց հետ: Քննող հանձնաժողովի անդամները իրենց դրական կարծիքներն ու դիտողությունները արտահայտեցին յուրաքանչյուր ուսանողի պատասխանից հետո, իսկ վերջում քննարկման արդյունքում հրապարակեցին գնահատականները, որոնք բավականին բարձր էին (14-ից մինչև 19 միավոր):

Այնուհետև Ա. Մարգարյանը ներկայացրեց ավարտական աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը, որում որպես թույլ կողմ նշված էր ուսանողների տեսական գիտելիքների և աշխատանքը ներկայացնելու ոչ ցանկալի մակարդակի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Գ. Ջավրուշյանը առաջարկեց, որ ուսանողները ավարտական աշխատանքները կատարելիս շեշտադրումը դնեն դիզայնի վրա, այլ ոչ ճարտարապետական ուղվածությամբ, որպեսզի ավելի նպատակային և խորը ըմբռնեն իրենց առջև դրված հիմնական խնդիրները:

Մ. Մելքումյանը դիրքորոշում արտահայտեց նշելով, որ ճարտարապետությունը կապված է մաթեմատիկայի, ֆիզիկայի և հաշվարկների հետ, բայց միևնույն ժամանակ սերտ կապված է նաև դիզայնի հետ:

Մ. Ստեփանյանը առաջարկեց ուսանողներին ուղղորդել, որպեսզի հետագայում նրանք այնպիսի թեմաներ, որոնք ուսումնառության ընթացքում ավելի լավ են տիրապետել:

IV կուրսի ավագ Դ. Մարգարյանը առաջարկեց, որ ուսանողի ցանկության և ունակության դեպքում թույլատրեն ավելի մեծ ծավալի ավարտական աշխատանք ներկայացնել, իսկ III կուրսի ուսանողուհի Ի. Փիրումյանը ցանկություն հայտնեց հաջորդ տարի ավարտական աշխատանքը ներկայացնել ճարտարապետական նախագծի տեսքով: Սրան ի պատասխան

Գ. Զավրուշյանը նշեց, որ եթե այդ աշխատանքը իրենից ներկայացնում է կանգառ, տաղավար կամ նման փոքր մասշտաբի ճարտարապետական լուծումներ, ապա կարելի է և նույնիսկ ցանկալի, այլ պարագայում՝ ոչ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Կիրառական արվեստի ֆակուլտետի 2019-2020 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գնահատել բավարար:
- Հանձնարարել երրորդ կուրսի ուսանողներին մինչև սթ. հուլիսի ութը գրել և ամբիոն ներկայացնել ավարտական աշխատանքների՝ իրենց նախընտրելի թեմաների կամ ուղղվածությունների ցուցակը:
- Մինչև 2020 թվականի սեպտեմբերի տասը ավարտական թեմայի ընտրության նպատակով ուսանողներին ներկայացնել դասախոսների կողմից տրամադրած ավարտական աշխատանքի թեմաների ցանկը:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնի վարիչները: Նրանք նշեցին, որ 2020-2021 ուստարվա «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերի ուսումնական պլաններում առաջարկվում են փոփոխություններ, որոնք քննարկվել և հաստատվել են ամբիոնների նիստերում: Զեկուցողները նշեցին, որ ղեկավարվելով ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի 2.1 խնդրի 5-րդ գործողության իրականացման հանձնառությամբ՝ բակալավրի կրթական ծրագրի մասնագիտական մի շարք դասընթացներում պետք է ներմուծվի հետազոտական աշխատանք: Հետազոտական աշխատանքը ներմուծվում է տվյալ դասընթացի շրջանակում հետազոտության կատարման և ներկայացման միջոցով, որի նպատակն է խթանել ուսանողի անհատական կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը:

«Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի վարիչի պաշտոնակատար, «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի ղեկավար Մ. Ստեփանյանը ներկայացրեց, որ այսուհետ կուրսային աշխատանքների փոխարեն, մասնագիտական բլոկի կրթական մոդուլներում ներդրվելու են հետազոտական բաղադրիչներ և առաջարկեց «Դիզայն» կրթական ծրագրում այն իրականացնել հետևյալ դասընթացներից՝

Զարդարվեստի կոմպոզիցիա- 2- 2-րդ կուրս III կիսամյակ

Դիզայն պատմություն- 3-րդ կուրս V կիսամյակ

Դիզայն նախագծում-1- 3-րդ կուրս V կիսամյակ

Հագուստի մոդելավորման կոմպոզիցիա- 1- 3-րդ կուրս V կիսամյակ

Դիզայն նախագծում -2- 3-րդ կուրս VI կիսամյակ

Տարազի պատմություն -3-րդ կուրս VI կիսամյակ

Հագուստի մոդելավորման կոմպոզիցիա -1- 3-րդ կուրս VI կիսամյակ

Նախագծում -6 - 4-րդ կուրս VII կիսամյակ

Երկրորդ փոփոխությունը վերաբերում էր «Գծագրություն-հեռանկար-1» և «Գծագրություն-հեռանկար-2» կրթական մոդուլներին, որտեղ զեկուցողը նպատակահարմար և արդյունավետ չէր համարում երկու տարբեր առարկաների դասվանդումը միասին և առաջարկեց բաժանել առանձին՝ «Գծագրություն» և «Հեռանկարչություն» մոդուլների՝ առանց ժամաքանակների փոփոխության:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Գ. Զավրուշյանը և Ք. Մխիթարյանը նշեցին, որ առաջարկվող փոփոխություններ կնպաստեն ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը, հետազոտական հմտությունների ձևավորմանը և ուսումնառության արդյունավետության բարելավմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Մինչև 07.07.2020թ. կազմակերպել հանդիպում-քննարկումներ ՄԿՈԱ բաժնի և դասախոսական աննակազմի հետ՝ հետազոտական բաղադրիչների ներդրման աշխատանքները արդյունավետ իրականացնելու համար:
- Մինչև 25.08.2020թ. հետազոտական բաղադրիչ պարունակող, ինչպես նաև «Գծագրություն» և «Հեռանկարչություն» կրթական մոդուլների առարկայական փաթեթների բովանդակության վերանայում և ներկայացում ուսումնամեթոդական վարչություն:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի ընթացիկ հարցի վերաբերյալ Ա. Մարգարյանը ներկայացրեց, որ տվյալ իրավիճակում շատ կարևոր է եզրափակիչ և հանրագումարային քննությունների պատշաճ կազմակերպումն ու անցկացումը: Նա նշվեց, որ ԵՊՀ-ի կողմից տրամադրվել են այնպիսի Zoom հարթակներ, որոնք չեն ընդհատվում 40 րոպեից հետո, ավտոմատ կերպով տեսաձայնագրվում և պահպանվում են համապատասխան էլեկտրոնային պահոցում: Այնուհետև ուսումնական վարպետներին հանձնարարվեց արվեստանոցներում կարգի բերել և հաշվառել ուսումնական գույքը, հաջորդ ուստարվա պահանջներն ուսումնասիրելով՝ առաջարկել նյութատեխնիկական բազայի հագեցվածության համար անհրաժեշտ սարքավորումներ, ռեկվիզիտներ և այլ նյութեր՝ հաշվի առնելով նաև առցանց ուսումնառության հնարավոր տարբերակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը նշեց, որ տնօրենությունը իր կարողությունների սահմանում կօգնի ուսանողությանը, մասնավորապես համալսարանում առկա նյութատեխնիկական միջոցներով, որպեսզի դասապրոցեսները անցնեն հավուր պատշաճի:

ՈՐՈՇԵՑԻՆ

Հանձնարարել ամբիոնի վարիչներին հնարավորինս մասնակցել քննական պրոցեսներին՝ ապահովելով թափանցիկություն և արդարություն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. Մարգարյան

Ք. Մխիթարյան